Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Քրիստինե Բեգլարյան,

Դավիթ Մելքոնյան:

♦ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետ,

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության փոխադրումների քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ:

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Բուլղարիայի Հանրապետություն, քաղաք Սոֆիա, 2018թ.-ի հունվարի 23-ից 25-ը:

♦ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Բուլղարիայի Հանրապետության տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի նախարարություն:

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների բնագավառում հայ-բուլղարական համատեղ հանձնաժողովի նիստին:

♦ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Համաձայն 2015թ. դեկտեմբերի 14-15-ը կայացած հայ-բուլղարական միջկառավարական 7-րդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության՝ 2018թ. հունվարի 24-25-ը ք. Սոֆիայում (Բուլղարիայի Հանրապետություն) կայացել է Միջազգային

ավտոմոբիլային փոխադրումների բնագավառում հայ-բուլղարական համատեղ հանձնաժողովի նիստ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Բուլղարիայի Հանրապետության տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվել և լրամշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին» համաձայնագրի նախագիծը՝ այն օրենքով սահմանված կարգով ՀՀ ներպետական գործընթաց սկսելու նպատակով:

Համաձայնագրի ստորագրումը հնարավորություն կտա աջակցելու երկու երկրների միջև առևտրային և տնտեսական հարաբերությունների փոխշահավետ զարգացմանը, երկու երկրների միջև ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների զարգացմանը, ինչպես նաև երկու երկրների տարածքով տարանցմամբ՝ դեպի երրորդ երկրներ և այդ երկրներից տրանսպորտային փոխադրումների իրականացմանը:

Երկու երկրների պատվիրակությունների ներկայացուցիչները տեղեկատվություն և վիճակագրական տվյալներ փոխանակեցին երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների, ինչպես նաև Հայաստանի ու Բուլղարիայի միջև միջազգային ապրանքաշրջանառության վերաբերյալ: Կողմերը եկան այն եզրահանգման, որ առևտրատնտեսական հարաբերությունների և տրանսպորտի բնագավառի զարգացումը մեծ հեռանկարներ ունի երկու երկրների համար և պատրաստակամություն հայտնեցին իրենց ջանքերը ներդնել երկկողմ համագործակցության հետագա զարգացման նպատակով:

Քննարկվեց և սահմանվեց միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների տարեկան թույլտվությունների փոխանակման չափաքանակը 2018թ. համար, ինչպես նաև՝ նախնական չափաքանակը 2019թ. համար: Բուլղարական կողմը խնդրեց 2018թ. և հետագա տարիների համար ավելացնել թույլտվությունների չափաքանակը, ի պատասխան որի հայկական կողմը տեղեկացրեց, որ Հայաստանում միջազգային փոխադրումները ազատականացված են և բեռնափոխադրումները Հայաստանից և դեպի Հայաստան կարող են իրականացվել առանց թույլտվությունների՝ վճարելով ճանապարհային վճարները:

Պատվիրակությունների ներկայացուցիչները տեղեկատվություն փոխանակեցին երկու երկրների տարածքներում հարկերի և տուրքերի վերաբերյալ:

Քննարկվեց նաև երկու երկրների միջև միջազգային ուղևորափոխադրումների իրականացման հարցը: Կողմերը պատրաստակամություն հայտնեցին քայլեր ձեռնարկել կանոնավոր ավտոբուսային երթուղիների ձևավորման համար, ինչպես նաև միջազգային ուղևորափոխադրումների իրականացման նպատակով թույլտվությունների փոխանակման համար:

Քննարկվեցին նաև Որակի Խարտիայի ներդրման մեխանիզմները:

Կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին ամնիրաժեշտության դեպքում, պարբերաբար անցկացնել Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության հարցերով խառը հանձնաժողովի նիստ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության հարցերով խառը հանձնաժողովի նիստը անցկացնել Երևանում, որի ժամկետները կհամաձայնեցվեն աշխատանքային կարգով:

♦ **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Քրիստինե Բեգլարյան

Դավիթ Մելքոնյան

01.02.2018թ.